ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե- 8298

«05» հոկտեմբերի 2021թ.

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
«ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. **«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ**-ն չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:
2. **«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացրած իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1. 2) սխալ է լրացված ընթացակարգի ծածկագիրը,
3. **«ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ**-ի կողմից eauction.armeps.am համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում

-5-րդ չափաբաժնի մասով նշված «մալուխի երկարությունը՝ 1.5մ., ստեղների քանակը՝ 103 հատ» չեն համապատասխանում առաջարկված «CrownMicro CMK-F02B (USB)» համակարգչային ստեղնաշարերի պարամետրերին,

-8-րդ չափաբաժնի մասով նշված «հիշողությունը՝ 1GB» չի համապատասխանում առաջարկված «2GB Arktek GeForce GT610 AKN610D3S2GL1 (810MHz, DDR3, 64bit, VGA/DVI-I/HDMI)» տեսաքարտերի պարամետրերին:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հոկտեմբերի 06-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվի անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788